



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

338:

7-48

ՀԿՅԵՄ ԱՌԱՋԻՆ ԱՍՏԻՃԱՆԻ

ԱԶԳԵՐՈՑԻ ԳՐԱԴԱՐԱՆ № 4

ՊԵՏԱԿԱՆ ԱՐԳՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ  
ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ՀԻՄՔՆ Ե

□ □ □

Հ. Խ. Ս. Հ. ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ—1926

15 JAN 2010

ՀԵՅՍՏ ԱՌԱՋԻՆ ԱՍՏԻՉԱՆԻ  
№ 4 ԲԱՂԴՊՐՈՑԻ ԳՐԱԴԱՐԱՆ № 4

338  
Պ-48

ս

ՊԵՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ  
ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ՀԻՄՓԸ Ե

14170



Հ. Խ. Ս. Հ. ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ — 1926

Գրառեպլար № 868ր.      № 462.      Տիրաժ 4000.

Պետհրատի յերկրորդ տպարան Յերևանում — 348.

## ՊԵՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՑԻԱ- ԼԻՍԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՖՆ Ե

Նախորդ յերկու զրույցներում մենք պարզեցինք պետական արդյունաբերության նշանակութիւնը ժողովրդական տնտեսության մեջ: Մենք իմացանք, վոր պետական խոշոր արդյունաբերութիւնը — յերկրի տնտեսության առաջավոր մասն է, մեր տնտեսական իշխող բարձունքներից գլխավորը: Ներկա զրույցի մեջ, մենք կը լուսաբանենք պետական արդյունաբերության աշխատանքը, կը պարզենք, թե պետական արդյունաբերութիւնը ինչու յենք սոցիալիստական համարում, թե նրա հետագա ամրացման համար ինչ միջոցներ են անհրաժեշտ:

## ՊԵՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՑԻԱԼԻՍԱԿԱՆ Ե

Խճ, պեժ և Եիժ յե- Վորպեսզի մեզ համար  
րիճասարգ բանվորը պարզ լինի, թե բանվոր դա-  
սակարգի համար ինչ է պետական արդյունաբե-  
րութիւնը, հիշենք թե գործարանում ինչպիսին

եր բանվորների վիճակը հեղափոխությունից առաջ, յերբ գործանանները պատկանում էին կապիտալիստներին:

Բանվոր դասակարգի պայքարից բերենք մի յերկու որինակ:

«Յերեք տարվա ընթացքում աշխատավարձը կրճատվել էր հինգ անգամ: Յուրաքանչյուր տարի Մարոզովը բանվորներից մի բանի տասնյակ հազար ուլերինք էր վերցնում միայն սուղաբանքի ձևով: Այդ բոլոր փողերը գնում էր գործարանատիրոջ գրպանը:

Բոլոր բանվորները զրգուված էին: Բավական էր մի կայծ և բոցը կը բռնկվեր...

Առավոտյան մոտ ժամը 10-ին գալիս է նահանգապետն իր իշխանավորներով և պահանջում, վոր բանվորները կամ համաձայնվեցին աշխատել Մարոզովի հայտարարած պայմաններով, կամ թե չէ թողնեն գործարանը:

«Այդ պայմաններով չենք ուզում աշխատել» պատասխանում են բանվորները:

Այդ պահուն առաջ է գալիս Ղուհակ Ֆեզոր Շելուխինը և իբրև բանվորներից ընտրված լիազոր, հայտնում է նահանգապետին, թե գործարանի առաջարկած պայմանները վոչ վոք չի ընդունում: Շելուխինին մոտենում է Վասիլի Վալկովը, ձեռքը վեր բարձրացնում, վորպեսզի

ամբոխը լսի: Վասիլի Վալկովը հաստատում է Շելուխինի ասածները և դառնալով ամբոխին՝ պահանջում բանվորների կազմած պայմանները:

Պայմանների տետրակը տալիս են Վալկովին, վերջինս էլ հանձնում է այն շրջանային դատախազին և պահանջում, վորպեսզի տեղն ու տեղը կարգացվեն բանվորների առաջադրած պայմանները: Սակայն դրա փոխարեն Վալկովն ու Շելուխինը անմիջապես ձերբակալվում են: Զինվորներով շրջապատված Վալկովը գոչում «մենք կապիտալիստների առաջ խոսել չենք կարող: Յեթե կորչում ենք, ապա բոլորս միասին կորչենք: Յես ամենքի համար, կամ ամենքն ինձ համար»: Բանվորները շարժվում են Վալկովի և Շելուխինի յետևից, բայց այդ ժամանակ նրանց վրա չեն թըռչում կազակները և նահանգապետի կարգադրությամբ ձերբակալում նորից 51 հոգի»:

Այդ ամենը տեղի յե ունեցել հեղափոխությունից շատ առաջ, 1886 թվին, Մարոզովի խոշոր մանածագործարաններից մեկում:

Ահա և մի ուրիշ որինակ, վոր կատարվել է համեմատաբար մոտ անցյալում՝ 1912 թվին:

«Փետրվար ամսին հանքերի բանվորները, գոյության անտանելի պայմանների ազդեցության տակ առաջադրել են 13 պահանջ—ավելացնել աշխատավարձը 30 տոկոսով, սահմանել 8 ժամյա

բանվորական սր, վարչական կազմից հեռացնել 27 հոգի, վորներ բանվորներ ի հասար հատկապես առանհի յնս և այլն: Հանքերում, վորն ընկած եր յերկ թուղուց յերկու հազ ր վերստ հեռավորության վրա, այդ ժամ անակ բավարարք անակութամբ զինված ուժ չկար: Իրա համար ել վարչությունը զիտամբ ձգձգում ր բանակցությունները, մի ժամ անպ պահանջում, վոր Իրկուսակուց զորք ուղարկեն: Իրկուսակուց ստացվում է մի գործառն Տերեշչենկոյի հրամանատարությամբ: Վարչության հետ բան կցություններ վարելու համար բանվորների ընտրած ներկայացոցիչները բա ասակվում են: Ապրելի 17-ին (ապրիլի 4-ին հին տոմարով) բանվորները զնում են բանակցելու: Նրանց զիմավորում են հաքերի վարչությունն ու Տերեշչենկոն: Բանակցությունների ժամանակ Տերեշչենկոյի հրամանով զինվորները կրակում են բանվորների վրա: Սպանվում են 270 հոգի և վիրավորվում 250»:

Այդ տեղի յե ունեցել Սիբիրում, Լենայի վոսկու հանքերում, Հոկտեմբերյան հեղափոխությունից մոտ 5 ու կես տարի առաջ: Մեր յերկրի բանվոր դասակարգն ամեն տարի վերհիշում է ապրելի 17 ի որը:

Կապիտալի դեմ վարած մարտերում և կոփվել բանվոր դասակարգը: Գործադուները, ցույ-

ցերը, զինված ապստամբությունը— պայքարի բուլոբ աչդ միջ ցները բանվոր դաս կարգը ոպտագործել և կապիտալի դեմ մղած իր կռվում: Յեվ 1917 թվի հոկտեմբերին բանվոր դասակարգը տապալեց բուրժուազիային:

Մեր յերիտասարդ բանվորներն այդ պայքարին չեն մաս ակցել: Նրանք իրենց կաշվի վրա չեն կրել ցարական ուժի ի դաճնությունն րը: Նրանք չեն հիշում ցարական նահանգապետներից և վոչ մեկին: Յեվ մեր նկարագրած դեպքերը յերիտասարդ բանվորին անհա կանալի կ թվան: Յիրբ կո յերիտ կանր սկսել և զիտակց բար մասնա ցել շրջապ տղ կյանքին. այդեն վոչ ցարն է յեղել և վոչ էլ նահանգապետները:

Կոմյերիտականր կարողացել է միանգամից կանգնել սոր՝ իրեն հարազատ բանվորական պետության կառուցողների շարքում:

Ահա ինչու յելիտասարդ բանվորն յիրբեմն լավ չի պատկերացնում, թե մեր յեկրում ինչ հսկայական փոփոխություններ են կատարվել: Յերիտասարդ բա վորներից յուրաքանչյուրը դեռ հաստատ չի յուրացրել, վոր ներկայիս պետական ձեռնարկությունը տարբերվում է նախապատերազմյան գործարանից այնքան, վորքան ցարական իշխանությունը Խորհրդային իշխանությունից, վոր բանվորների հասակավոր սերունդը կապի-

տալի դեմ մղած արյունալից պայքարի միջոցով  
ե ձեռք բերել իր աչտորվա գործարանները:

Մեր գործառնանքները կոմյերիտական մամուլում  
ուում ներկայացված ե տպվել ե մի խումբ կոմյե-  
միայն բանվոր գասա- րիատկանների նամակն,  
կարգը ուղղված իրենց գործարա-

նի տեսչին: Այդ նամակում ընկերները ասում են,  
թե գործարանում, այժմ, ամեն ինչ նույնն ե, ինչ  
վոր կար հին ժամանակ: Հին գործարանատիրոջ փո-  
խարեն կարմիր տեսուչն ե, վորը և վարձում ե  
բանվորներին: Բանվորներին շահագործում են,  
աշխատավարձը ցածր ե»:

Պարզ ե, վոր նամակ կազմողները — հետա-  
մնաց ընկերներից են: Գիտակից բանվորներից և  
վոչ մեկը չի ստորագրի այդ նամակի տակ:

Ինչո՞ւմն ե կայանում նամակ կազմողները  
և նրանց նման մտածող ընկերների ամենագլխա-  
վոր սխալը:

Նրանում, վոր այդ մարդիկ չեն նկատել նա-  
խապատերազմյան և մեր պետական գործարանե-  
րի գլխավոր տարբերությունը: Հին կապիտալիստ-  
տական գործարանում միմյանց դեմ պայքարել են  
յերկու զասակարգ — պրոլետարները՝ շահագործ-  
վողների զասակարգը և կապիտալիստների՝ շահա-  
գործողների զասակարգը: Նախապատերազմյան  
գործարանը պատկանում եր կապիտալիստին: Իսկ

մեր պետական ձեռնարկությունները պատկա-  
նում են բանվորական պետությունը, բանվոր  
դասակարգին, վորը և մեր յերկրում իշխանու-  
թյան գլուխ ե կանգնած: Դրա համար բանվոր  
դասակարգը տանյակ տարիներ պայքար ե մղել,  
դրանումն ե կայանում հեղափոխություն ամենա-  
գլխավոր հաղթանակը:

Մեր պետական Գննենք այն հարցը, թե ին-  
ձեռնարկությունները չու մն ե կայանում կապիտա-  
րում օհագործում լիստական ձեռնարկության  
չկա լիստական ձեռնարկության  
մեջ կատարվող շահագործումը:

Վարձվելով և աշխատելով կապիտալիստա-  
կան ձեռնարկության մեջ, բանվորն իր աշխա-  
տանքով ստեղծում ե ավելի մեծ արժեք, քան նա  
ստանում ե աշխատավարձի ձևով:

Իր ձեռնարկության մեջ ապրանք արտա-  
դրելու նպատակով կապիտալիստը գնում ե հում  
նյութ, վառելիք և յուղ՝ մեքենաների համար:  
Արտադրության ընթացքում մաշվում են մեքե-  
նաները, մաշվում ե գործարանի շենքը: Մեքե-  
նան կամ շենքը վերականգնելու համար կապի-  
տալիստը պետք ե վորոշ գումար ծախսի:

Իսկ կապիտալիստը վճարեցից ե վերցնում  
իր շահույթը:

Նա վաստակում ե բանվորից: Բանվորին կա-

պիտալիստը վարձատրում է ավելի քիչ, քան նա արտադրում է:

Այդպիսով, շահագործուժը կայանում է նրա նում, վոր մի դասակարգ կապիտալիստները — յուրացնում են մի այլ դասակարգի աշխատանքով ստեղծված արժեքը: Շահագործում կարող է լինել յեկ լինում է միայն այնտեղ, վորտեղ դեմ առ դեմ կանգնած են յերկու իրար թշնամի դասակարգեր՝ բանվորներն ու կապիտալիստները:

Ակնհայտ է, վոր մեր պետական ձեռնարկություններում խոսք անգամ լինել չի կարող վորևէ շահագործման մասին: Մեր ձեռնարկությունները պատկանում են բանվոր դասակարգին և չկա կապիտալիստների դասակարգը, վոր կարող կը լիներ յուրացնել բանվորների ստեղծած հավելյալ արժեքը:

Կարող են հարց տալ. բայց չե՞ վոր մեր պետական ձեռնարկություններում ել է շահույթ ստացվում: Չե՞ վոր մեր պետական ձեռնարկություններում ևս բանվորը աշխատավարձի ձևով չի ստանում այնքան, վորքան նա ստեղծում է իր աշխատանքի միջոցով: Դա, ի հարկե, հեշտ է: Պետական արդյունաբերությունն իսկապես արդեն սկսել է վորոշ շահույթ տալ և դա հանդիսանում է բանվոր դասակարգի խոշոր հաղթանակներից մեկը: Բայց դա վոչ մի դեպքում չի

ապացուցում, թե մեր պետական ձեռնարկություններում կա շահագործում:

Կապիտալիստական ձեռնարկության մեջ շահույթը հոսում է կապիտալիստի — շահագործողի գրպանը: Շահույթի մի մասը նա լսփում է, իր համար պայտաներ է շինում, հսկայական գումարներ է ծախսում շվայտ կյանք վարելու համար: Շահույթի մեծ մասով կապիտալիստը նոր գործարաններ է կառուցում, վորպե՛զի ել ավելացնի իր տնտեսական ուժը, վորպեսզի նոր գործարաններից ավելի մեծ վաստակ ստանա: Իր շահույթի յերրորդ մասով կապիտալիստը կաշառում է թեյ թերին, դրամական աջակցություն է ցույց տալիս յեկեղեցուն, վոստիկանությանը և աշխատավոր մասսաներին խաբելու ու հալածելու համար ստեղծված այլ հաստատություններին:

Իսկ ո՛ւր է գնում մեր պետական արդյունաբերությունից ստացվող շահույթը: Այդ շահույթը գործադրվում է բանվոր դասակարգին պատկանող պետական արդյունաբերության լայնացման ու վերականգնման համար. այդ շահույթը հանդիսանում է յերկրի ինդուստրիացման միջոցների աղբյուրներից մեկը: Այդ շահույթով պահվում է պրոլետարական պետությունը պաշտպանող Կարմիր բանակը և ամբողջ պետական ապարատը: Այդ շահույթով բարելավվում է է բան-

վորները կենցաղը: Այդ հաստատում է 1923-24 թվին պետական արդյունաբերությունից ստացված շահույթի բաշխման հետևյալ դիագրամը:

Գանձառահիճ (Քրեմոդկոմաս) 8745 է՝ ա) արդյունաբերության շինարարություն, բ) գյուղատնտեսության բարձրացման գ) բնակչությանը սպասարկելու և դ) խորհրդային պետության շինարարության համար 46 միլոն 900 հազար ռուբլի (32,8%)

Պահեստի Փոնգ (պետական բանկ) — 30 միլիոն 800 հազար ռուբլի (22,2%)

Քանվորների կենցաղը բարելավելու համար — 7 միլիոն ռուբլի (5%)

Շրջանառության մեջ է գրված — 30 միլիոն 100 հազար ռուբլի (21,7%):

Աղյուսակը մեզ ցույց է տալիս, վոր մեր պետական ձեռնարկություններում բանվոր դասակարգի ջանքերով ստեղծվող հասույթը, լիովին գործադրվում է բանվոր դասակարգի կարիքների համար:

Ընդունենք, թե մեր պետական ձեռնարկությունները շահույթ չեն ստանալու: Չեռնտո՞ւյ՞ն է այդ բանվոր դասակարգին: Պարզ է, վոր վո՞նչ: Շահույթի բացակայությունն ամենից առաջ կանդորդանար մեր արդյունաբերության վրա, կը կասեցնեն նրա ծավալման ընթացքը, կը թու-

լացնեն բանվոր դասակարգի ուժը, կը բանդեն նրա դիկտատուրան:

Կապիտալիստի շահույթը ամբացնում է պրոլետարիատի թշնամիներին, հեռացնում ու հետաձգում է պրոլետարական հաղթանակի ժամը: Պետական ձեռնարկություններից ստացվող շահույթն ամբացնում է մեր արդյունաբերությունը, ամբացնում է մեր ամբողջ խորհրդային պետությունը: Իրանով իսկ այդ շահույթն արագացնում է սոցիալիզմի հաղթանակը:

Յածր աշխատավարձը Յերբեմն, հատկապես հետեվանք է մեր ազատությանը և մեր պակաս չափով հատուցվող բանվորներն հարց են տալիս. «Ինչպե՞ս եք դուք ասում, թե մեզ մոտ շահագործում չկա: Յես ստանում են 30-40 ռուբլի ոտճիկ, իսկ ընտանիքս 5 հոգուց է կազմված»:

Այո, պետական արդյունաբերության մեջ աշխատավարձը բարձր չէ: Նա դեռ լիովին չի հասել նախապատերազմյան մակարդակին, վո՞նչ իհարկե նույնպես ցածր է չեղել: Բայց դա բացատրվում է մեր ընդհանուր աղքատությունը: Մեր տնտեսությունը տեխնիկայես հետամնաց է. հին Ռուսաստանից, ինչպես արդեն մի բանի անգամ հիշել ենք, մեզ ծանր ժառանգություն է մնացել: Կալվածատերերի ու կապիտալիստների

Թալանչիական տիրապետութիւնը թույլ չի տվել, վորպեսզի չերկիրը տնտեսապէս բարձրանա. Գյուղացիական տնտեսութիւնը քայքայվել է: Կապիտալիստները հաշվի չեն նստել վողջ տնտեսութեան շահերի հետ, այլ ձգտել են անձնապէս հարստանալ: Բնակչութեան հսկայական մասսաները, ցարխոյնի քաղաքականութեան շնորհիվ, կուլտուրապէս անչափ յետ են մնացել: Իսկ պատերազմի յերկար տարիները հյուժել են մեր յերկիրը:

Վատ ապրուստը չպետք է շփոթել շահագործասան հետ: Աշխատավարձը չպետք է միշտ ցածր մնա: Վերջին տարիների ընթացքում աշխատավարձը զգալի չափով բարձրացել է. այդ մասին մենք խոսել ենք նախորդ գրուցի մեջ: Տարեց տարի մենք պետք է հաղթահարենք աղքատութիւնը: Տեխնիկայի յուրաքանչյուր նվաճումը, արդիւնաբերութեան վիճակի բարելավումը, խորհրդային իշխանութիւնն ոգտագործում է բանվորական սասանների բարեկեցութեան մակարդակը բարձրացնելու նամար: Պրոլետարիատի դիկտատուրան բավական հիմք է հանդիսանում նրա համար, վորպեսզի մեր յերկրի բանվոր դասակարգը վաղ թե ուշ իր յետըը թողնի վոչ միայն Խուսաստանի աշխատավարձի նախապատերազմյան մակարդակը, այլ և կապիտալիստական հա-

րուստ յերկրներում սահմանված աշխատավարձի մակարդակը:

Մի բանի կապիտալիստական յերկրներում, վորոնք ավելի հարուստ են մեղանից, աշխատավարձը հիմա իսկ արդես ծանր է, բան Խորհրդային Միութեան մեջ: Կապիտալիստական և վոչ մի յերկրում խոսք անգամ չկա բանվորների վիճակի հետագա բարելավման մասին: Ընդհակառակը, մենք ականատես ենք նրան, թե ինչպէս կապիտալը հարձակում է գործում բանվոր դասակարգի վրա, նպատակ ունենալով կրճատել աշխատավարձը յեւ յերկարացնել բանվորական որը: Այդ առթիվ ապացույցներ շատ կան. ամեն որ հեռագրերը հաղորդում են կապիտալիզմի հաճակումն ապացուցող նորանոր փաստեր:

Անգլիական հանքագործ բանվորների միութեան նախագահ Սմիտը այցելել էր Դոնեցի հանքագործներին: Նրանցից մեկի հետ զրուցելիս, Սմիտը նկատել է, վոր Խորհրդային Միութեան մեջ հանքահորերը ավելի վատ են սարքավորված քան Անգլիայում:

«Բայց հո մեր սարքավորումն է» պատասխանել է նրան հանքագործը:

Հանքագործի այդ խոսքերը մենք պետք է միշտ հիշենք:

Մեր ձեռնարկութիւնները դեռ աղքատ են:

Մեր մեքենաներն ել են վատ արտասահմանյան մեքենաներից, ապրանքներն ել: Բայց դրանք մեր ձեռնարկություններն են:

Պետական ձեռնարկությունները հանդիպում բյուջեներում գեռ կան ցաս ենք այսպես մտածող պահասություններ մարդկանց.— Դուք ասում եք, վոր մեր ձեռնարկությունները սոցիալիստական են, իսկ այս ինչ տեղը վատնում ե կատարվել, յերկրորդ գործարանում իշխում ե անտնտեսարարությունը, յերրորդում վատ ե դրված աշխատանքի պաշտպանությունը և այլն...:

Նման պահասություններ մեր պետական արդյունաբերության մեջ դեռ շատ կան: Բայց ի հարկե այստեղից չպետք ե յեզրակացնել, վոր դրանով մեր ձեռնարկությունները սոցիալիստական չեն:

Մեր պահասությունները հետևանք են նրան, վոր մենք դեռ բավականաչափ լավ աշխատել չգիտենք: Աշխատավորական մասսաները դեռ կրում են անցյալի բեռը, անկուլտուրականության բեռը: Բանվոր դասակարգը իշխանությունը գրավել ե չունենալով պետական ապարատի դեկավարման փորձը: Մենք ստիպված ենք կառուցել այն, վո՛չ միայն սեփական, այլ և այնպիսի մարդկանց ձեռքով, վորոնք չեն հասկացել հեղափոխությունը: Մենք մեր բացերը պետք ե շտկենք

1003  
1470

համառ աշխատանքով: Բայց չնայած բոլոր այդ պակասություններին, մեր արդյունաբերությունը — բանվորական ե, սոցիալիստական ե:

«Զի կարելի մեր պետական ձեռնարկություններում կառավարող մարմինների առանձին բացերի ու բյուրոկրատիզմի հիման վրա, բացեր, վոր դեռ ևս գոյություն կունենան, այդ բացերի ու հին մնացորդների հիման վրա չի կարելի մոռանալ, վոր մեր ձեռնարկությունները ըստ էյության հանդիսանում են սոցիալիստական ձեռնարկություններ: Վորովհետև, կարգին աշխատող Ֆորդի ձեռնարկություններում, որինակ, աջնտեղ գուցե և գողությունն ավելի քիչ ե, բայց աջնուամենայնիվ նրանք աշխատում են Ֆորդի համար, կապիտալիստի համար, իսկ մեր ձեռնարկությունները, վորտեղ յերբեմն գողություն ե պատահում և վորտեղ գործերը միշտ չեն կարգին գնում, բայց և աջնպես աշխատում են պրոլետարիատի համար»:

Կարմիր սետույք ծա- Մեր յերկրում բանվորաշուրմ ե բանվոր դասաները իշխանության գրկարգիճ լուխ են անցել առանց արդյունաբերության դեկավարման փորց ունենալու: Բայց բանվոր դասակարգը կարողացել ե իր շարքերից առաջադրել մի շարք ընդունակ տնտեսարարներ, վորոնք

և ձեռնարկութիւնների գլուխ են կանգնել: Այդ ընկերները սովորել են աշխատանքի պրոցեսում, իրենց ուսուցումը նրանք շարունակում են և մինչև այսօր: Մեր արդյունաբերութիւնն հաջողութիւնները ցույց են տալիս, վոր կարմիր տեսսուչները կարողանում են գլուխ բերել արդյունաբերութիւնն կառավարման մի այդքան պատասխանատու խնդիր:

Կարմիր տեսուչներն, իրենց ճնշող մեծամասնութիւնը փորձված հեղափոխականներ են, մարդիկ, վոր վայելում են կուսակցութիւնն ու բանվոր դասակարգի վստահութիւնը: Իհարկէ, դրանց մեջ կան և անպետքները: Սակայն խորհրդային իշխանութիւնը հետզհետե ազատվում է անպետք տնտեսարարներից:

Կարմիր տեսուչը կատարում է չափազանց դժվարին աշխատանք: Նրանց պետք է ամեն կերպ աջակցել: Մեր ձեռնարկութիւններում դեռ կան (ամեն տեսակի) շատ պակասութիւններ: Բայց դա դեռ չի նշանակում, վոր պետք է խարազանել տեսչին: Ընդհակառակը, պետք է ամեն կերպ աջակցել նրան՝ նկատվող բացերը վերացնելու գործում:

Պեսական արդուցա- Այս բոլորից հետո մեզ բերուքուցը — սոցիալիս- համար հասկանալի չե  
 ակաճ և դառնում, թե ինչու է  
 նինը մեր պետական ձեռնարկութիւնները բն-

րոշում եր վորպես «հաջողաբար — սոցիալիստական տիպի ձեռնարկութիւններ»: Նրանք սոցիալիստական են, վորովհետե այնտեղ բացակայում է կապիտալիստի մասնավոր սեփականութիւնը, վորովհետե չկա շահագործում: Յեվ յուրաքանչյուր բանվոր հասկանում է այդ. նա գիտակցում է, վոր պետական ձեռնարկութիւնն իր բանվորական ձեռնարկութիւնն է:

Դրանումն է մեր ուժը: Քաղաքացիական պատերազմի որերին բանվոր դասակարգը կրել է քաղցի ու ցրտի ծանր զրկանքներ, սակայն նա չի թողել գործարանը, բանի վոր պետական ձեռնարկութիւնը բանվոր դասակարգը դիտել է վորպես իր դասակարգի ամրոցը, հենարանը: Ներկայումս բանվորը մոտ է կանգնած արդյունաբերութիւնը, մտածում է նրա բարելավման մասին, վորովհետե նա գիտակցում է, վոր պետական արդյունաբերութիւնն զարգացումը — սոցիալիզմ կառուցող բանվոր դասակարգի հիմնական անելիքն է:

Հասկանալի չէ, վոր մեր թշնամիները, մենչևիկները, եսերները և մյուս դավաճանները, բոլոր միջոցները գործ են դնում ապացուցելու համար մեր բանվորներին, վոր պետական ձեռնարկութիւնները սոցիալիստական չեն: Բայց և մեր սեփական միջավայրում, կոմունիստական կու-

սակցութեան շարքերում առանձին ընկերներ փորձում են խախտել Լենինի տեսակետները մեր արդյունաբերութեան սոցիալիստական լինելուն հակառակ: Այդ փորձեցն արել են ուսուցիչի ներկայացուցիչներն իրենց յերուցթներում, ինչպես 14-րդ համագումարում, այնպես էլ համագումարից առաջ:

Ուսուցիչի գտնում էր, վոր մեր պետական ձեռնարկութունները հանդիսանում են պետական կապիտալիզմի ալաձևութուններից մեկը (հիշիր), թե վոր ձեռնարկութունները պետք է համարվեն պետական — կապիտալիստական: Դասին ձեռնարկութունն է, վորի գլխին կանգնած է կապիտալիստը և աշխատում է պետութեան հակողութեամբ):

«Ինչ ձևի էլ ուզում է լինի պետական կապիտալը, նա իր ելութեամբ պետք է լինի մասնատիրական: Իլիչը, յերբ անալիզի է յենթարկել պետական կապիտալիզմը, նկատի յե ունեցել, առաջին հերթին, կոնցեսիաները: Վերցնենք կոնցեսիաներն, արդյոք ներկայացված են այստեղ յերկու դասակարգ: Այո, ներկայացված են: Կապիտալիստների դասակարգը, այսինքն կոնցեսիաներները, վորոնք շահագործում են և ժամանակավորապես տիրում արտադրական միջոցներին: Յե՛վ պրոլետարների դասակարգը, վոր շահա-

գործվում է կոնցեսիաներների կողմից» (Մտային):

Ասել, վոր մեր պետական ձեռնարկութունները պետական-կապիտալիստական են — նշանակում է պնդել, թե մեր պետական ձեռնարկութուններում ներկայացված են յերկու դասակարգ, թե այնտեղ շահագործում կա: Այդ տեսակետները թերահավատութուն են առաջ բերում դեպի մեր յերկրի սոցիալիստական շինարարութեան գլխավոր հիմունքը: Նման տեսակետները, իր սոցիալիստական արդյունաբերութեան զարգացման խնդրով մտահոգված բանվորի մեջ կարող են ստեղծել թերահավատութուն, շփոթութուն:

Կուսակցութունը կտրականապես ժխտել է ուսուցիչի այդ տեսակետները: Իր բանաձևերում կուսակցութեան 14-րդ համագումարն ասում է, վոր մեր առաջ ծառայած տնտեսական շինարարութեան խնդիրները լուծելու համար, պետք է «պայքարել մեր յերկրում սոցիալիզմի շինարարութեան գործին չհավատալու և մեր ձեռնարկութունները, վորոնք «հաջորդաբար — սոցիալիստական տիպի» (Լենին) ձեռնարկութուններ են, պետական կապիտալիստական ձեռնարկութուններ դիտելու փորձի դեմ»:

Արտադրութեան մեջ են քաշվում բանվորների ավելի ու ավելի նոր կարգեր, վորոնք ար-

տաղրութեան մեջ դեռ նորեկներ են հանդիսանում: Մեր ձեռնարկութիւններում աշխատում եւ եւ մեծ թվով բանվոր չերիտասարդութիւն, վորը չունի բանվոր դասակարգի հասակավոր սերնդի պայքարի փորձը: Մեր ձեռնարկութիւններում դեռ շատ պակասութիւններ կան: Ծանր են դեռ բանվորական մի շարք խավերի կշանքի պայմանները: Ասած ենք նշան կուս եւ, վոր մեր պետական արդիւնաբերութեան սոցիալիստական լինելու թերահավատութիւնը կարող եւ արձագանք գտնել հետամնաց այս կամ այն բանվորական խավի մեջ: Ահա ինչու, համազումարն իր բանաձևում ընդգծում եւ, «վոր անհրաժեշտ եւ դաստիարակչական լայն աշխատանք կատարել լինի՞րդ ի այդ խեղաթյուրումները հաղթահարելու համար»:

## ՄԵՐ ԳԼԻԱՎՈՐ ԽՆԴԻՐՆ Ե ԱՄՐԱՑՆԵԼ ՊԵՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Պետք եւ բարձրացնել Արդիւնաբերութեան ամառաշրջանի արտադրած ու զարգացման գրողականութիւնը խնդիրը հանդիսանում եւ ինչպես վողջ բանվոր դասակարգի, այնպես ել յուրաքանչյուր առանձին բանվորի ամենակարգ վարագույն անելիքը: Առանց պետական արդիւնաբերութեան ամրացման, խոսք չի կարող լինել

այն մասին, վոր մեր ժողովրդական տնտեսութիւնը առաջ կը շարժվի դեպի սոցիալիզմ:

Արդիւնաբերութեան ամրացումն ամենից առաջ պահանջում եւ բարձրացնել աշխատանքի արտադրողականութիւնը: «Աշխատանքի արտադրողականութիւնը— դա վերջին հաշվով կարեւորն, ամենագլխավորն եւ նոր հասարակարգի հաղթանակի համար... Կապիտալիզմը կարող եւ վերջնականապես հաղթահարվել, վերջնականապես հաղթահարված կը լինի նրանով, վոր սոցիալիզմը ստեղծում եւ նոր, անհամեմատ ավելի բարձր աշխատանքի արտադրողականութիւն» (Լենին):

Իսկ ինչպիսին եւ աշխատանքի արտադրողականութեան վիճակը մեր պետական արդիւնաբերութեան մեջ:

Այդ բնագավառում մենք ունենք վորոշակի հաջողութիւններ: Յուրաքանչյուր բանվորի մի որվա միջին արտադրածը նախապատերազմյան ուրբիներով կազմել եւ.— 1924 թվի սեպտեմբերին՝ 4 ու 49 կոպ., 1925 թվի սեպտեմբերին նա բարձրացել եւ մինչև 6 ու 14 կոպ., այն ժամանակ, յերբ ամբողջ արտադրութիւնը 1924 — 25 թվին ավելացել եւ 37 տոկոսով (36,7) իսկ բանվորների քանակն՝ ընդամենը 23 տոկոսով (23,5): Նշանակում եւ, արտադրութիւն աճումը (արտադրած ապրանքների ամբողջ քանակը) ա-

ուջ ե յեկել մեծ մասամբ աշխատանքի արտադրողականության բարձրացման, քան բանվորների քանակի մեծացման հաշվին: Բանվոր դասակարգը գործադրելով կրկնապատկած ջանքեր, ամբարջել է իր սոցիալիստական արդյունաբերությունը: Կուսակցություն 14 ըդ համագումարի բանաձևը հիշատակում է, վեր պետական արդյունաբերություն «այդ հաջողություններին հասնել անկարելի չեր, յեթե բանվորական լայն մասսաներն ակտիվորեն չմասնակցելին սոցիալիստական արդյունաբերության ընդհանուր շինարարության գործին (աշխատանքի արտադրողականության բարձրացման կապանիա, արտադրական խորհրդակցություններ և այլն)»:

Բայց և այնպես, աշխատանքի արտադրողականության բարձրացման բնագավառում դեռ անչափ շատ բան ունենք անելու: Մեր ձեռնարկություններում աշխատանքի արտադրողականությունը վոչ միայն մեծապես յետ է մնացել արևմուտքի կապիտալիստական ձեռնարկություններից, այլև լիովին դեռ չի հասել նախապատերազմյան մակարդակին, վորը նույնպես ցածր պետք է համարվի:

Իհարկե, աշխատանքի արտադրողականության նկատմամբ վճռական ու վերջնական առաջխաղացում կարելի չէ ձեռք բերել միայն մեր

ձեռնարկությունների հին ու ժաշված սարքավորումը նորով փոխարինելու հետևանքով: Բայց դրա համար պահանջվում են հսկայական միջոցներ: Պետությունը հնարավորության սահմաններում ձեռք է բերում այդ միջոցները: (Այդ մասին մենք մանրամասն խոսել ենք 3-րդ գրույցում): Սակայն ինչքան էլ մենք ջանքեր գործ դնենք, այնուամենայնիվ, մենք չենք կարող մեր արդյունաբերության վերասարքավորումն իրագործել կարճ ժամանակվա ընթացքում: Դրա համար էլ, առայժմ մեր անելիքն է հանդիսանում, արդյունաբերության մի շարք ճյուղերում, գոյություն ունեցող սարքավորման պայմաններում ձեռք բերել աշխատանքի հնարավոր ամենաբարձր արտադրողականությունը:

Իսկ մենք այդ հնարավոր ամենաբարձր արտադրողականությունից դեռ բավականին հեռու չենք: 1926 թվի առաջին ամիսներին, որինակ, պետական արդյունաբերության մեջ նկատելի չափով իջնում է աշխատանքի արտադրողականությունը: Դստեցի ավազանում աշխատանքի արտադրողականությունն իջել է ամբողջ 20 տոկոսով: Աշխատանքի արտադրողականության բարձրացման խնդիրն իր ամբողջ սրությունը դրվում է մեր յերկրի բանվոր դասակարգի առաջ:

Վորսնը են աշխատանքի արտադրողականութ-  
յան բարձրացման միջոցները

Աշխատանքի արտադրողականությունը կար-  
ված է, ամենից առաջ բանվորի աշխատանքի  
լարվածությունից: Իսկ 1926 թվի առաջին կի-  
սին ծավալվել է գործալքություն (прогул) լայն  
ալիքը:

Ահա որինակ, թե ինչ են հորդում Պետ-  
րովսկու և Լենինի անվան գործարաններից:

«Ռեձիկներ ստանալու որելը և տոն որե-  
րից հետո, աշխատանքի չի կանգնում բանվոր-  
ների 25-30 տոկոսը: Որեր են լինում, չիբբ աշ-  
խատանքի չկանգնողների թիվը հասնում է մինչև  
4 հազարի (բանվորների ընդհանուր քանակն է  
22 հազար): Իսկ վերջերս էլ բանվորները գոր-  
ծի են գալիս հարբած վիճակում»:

Պետրովսկու անվան գործարանում, մարտի  
13 ին մետաղ գլանող սաժանմունքի յերկրորդ  
հերթի աշխատող բանվորները յեկել են ժամը  
7-ին, այն էլ հարբած վիճակում: Հետևանքն այն  
է յեղել, վոր 2 հազար 500 փութ գլանելու փո-  
խարեն, գլանել են ընդամենը 700 փութ, վորի  
կեսը անպետք է համարվել»:

Այս որինակը մեջ բերելուց հետո, վոչ մի կա-  
րիք չկա ապացուցելու, թե գործալքությունն ան-

սահման վատ է անդրադառնում աշխատանքի  
արտադրողականություն վրա:

Պետք է անողոր պայքար մղել աշխատանքի  
ժամերը չոգտագործելու յերևույթի դեմ, պետք  
է պետական ձեռնարկություններում ուժեղացվի  
աշխատանքային դիսցիպլինան:

Գործալքությունը արտադրության թշնամին է՝  
սոցիալիստական արգյունաբերություն կործանո-  
ղը: Գործալքողների նկատմամբ բանվորներն այն-  
պիսի վերաբերմունք պիտի ցույց տան, վորպես-  
զի նա հասկանա, վոր ինքը հանցանք է կատա-  
րել հեղափոխության առաջ, իր դասակարգի առաջ:  
Աշխատանքային դիսցիպլինայի բացձրացման հա-  
մար մղած պայքարում վերջին տեղը չի պատ-  
կանում կոմյուրիստիությանը: Մենք տեսնում  
ենք, վոր գործալքությունը զբաղվողների մեջ շատ  
հաճախ գտնվում են բավականին թվով կոմյուրիստա-  
կաններ:

Աշխատանքի արտադրողականության բարձ-  
րացման մյուս միջոցը—արտադրության լավ  
կազմակերպումն է: Այս հարցում մեզ մոտ շատ  
բացեր կան:

Վերցնենք մանածագործական խոշոր գոր-  
ծարաններից մեկի 7 առյա (1925 թ. հոկտեմ-  
բեր—1926 թ. ապրիլ) գործունեություն հաշվե-  
տվությունը: Մենք այստեղ կարդում ենք.—

«Մեր գործարանի դադարները (անգործ մը-  
նալը) առհասարակ շատ մեծ են: Դադարների  
գլխավոր պատճառները պարզելու համար մեզ  
անհրաժեշտ է բոլոր պատճառները վերածել 3  
հիֆտական խմբերի. (մեջ բերվող թվերը կլորաց-  
ված են)

	Հոկտ. նոյեմ.	Դեկտ. հուն.	Փետր. մարտ	Մայրի ունիս.	Յուլի օգոստ.	Սեպտ. հոկտ.
Մեքենաների մաշման պատճառով	6	6	6	7	5	4
Տեխնիքական ալլ պատճառներով	7	7	6	5	6	4
Իրենց բանվորների պատճառով	3	4	4	3	4	4
Ընդամենը՝	16	17	16	15	15	13

Գործարանը ներկա տարվա 7 ամիսների ըն-  
թացքում զանազան պատճառներով կորցրել է  
233 հազար 634 աշխատանքային ժամ, այ-  
սինքն կորցրել է ճիշտ այնքան ժամ, վորքան վոր  
միջին հաշվով աշխատում է գործարանը մի ամսվա  
ընթացքում:

Այժմ տեմենը, թե այդ կորցրած ժամերն  
ինչպես են անդրադառնում գործարանի վրա: Ա-  
մեն մի հաստոց (станок) պահելը, անկախ նը-  
րանից աշխտում է այն թե չե, գործարանի  
վրա նստում է ժամը 71 կոպեկ: Հետևաբար, հաս-  
տոցները 233 հազար 634 ժամ անգործ պահելու

արժեքը արտահայտվել է 158,780 ռուբլի գումար-  
ով: Այդ ժամանակամիջոցում հաստոցները վո-  
չինչ չեն արտադրել, ուստի և հիշած գումարն  
ամբողջությամբ կարելի չէ գործարանի ծախք  
համարել:

Միջին հաշվով, աշխատանքի ամեն մի ժա-  
մում, յուրաքանչյուր հաստոց արտադրում է 2-3  
մետր ապրանք, հետևաբար դադարի 223 հազար  
634 ժամերի ընթացքում 514 հազար 358 մետր  
ապրանք պակաս է արտադրվել, այսինքն ավելի  
շատ, քան գործարանը արտադրում է մի ամ-  
սրվա ընթացքում:

Իսկ այդ գործարանը լավ աշխատող ձեռ-  
նարկություններից մեկն է: Գործարանի վարչու-  
թյան և բանվորների միահամուռ ջանքերով հա-  
ջողվել է գործալքությունը զգալի չափով կրու-  
ճատել և մայիսին նա կազմել է ընդամենը 1 1/2  
տոկոս, 4 և կես տոկոսի փոխարեն: Այդ ցույց է  
տալիս, թե արտադրությունը լավ կազմակերպվու-  
համար ինչքան շատ բան կարելի չէ անել:

ԽճճԱՐԺԵՖԻ ԻՋԵ. Աշխատանքի արտադրողա-  
ցումն ու վորակի կանության բարձրացման հե-  
թարձրացումը տեանքն այն կը լինի, վոր կիջնի  
ապրանքների ինքնարժեքը: Բանվոր դասակարգն  
այստեղ էլ է նվաճումներ ձեռք բերել: Առանձին  
ապրանքների նկատմամբ մենք ունենք այսպիսի

թվեր. — մի մետր կտավի ինքնարժեքը 1923-24 թվի առաջին յեռամսյակում կազմում էր 62 կոպեկ. իսկ 1924-25 տարում մոտ 43 կոպեկ: Մի արկղ լուցկին նույն ժամանակամիջոցում 5 ուլբլի 95 կոպեկից իջել է մինչև 4 ուլբլի 94 կոպեկ: Սակայն մեր ապրանքների ինքնարժեքը դեռ ներկայումս ել բարձր է արտասահմանյան ու նախապատերազմյան գներից:

Բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը, նշանակում է միաժամանակ բարելավել արտադրությունի վորակը: Մեր արդյունաբերության առաջ վորակի խնդրում մեծ պահանջներ դնել չի կարելի, վորովհետև նրա սարքավորումը մաշված է: Բայց դրությունը դեռ այնպես է, վոր արդյունաբերության շատ ճյուղեր ավելի ցածր վորակի ապրանք են արտադրում, քան կարող է տալ արդյունաբերությունն իր ներկայիս արաքավորումով:

Ապրանքների ինքնարժեքի իջեցման և վորակի բարելավման խնդիրը աճագին նշանակություն ունի բանվոր դասակարգի և գյուղացի ության փոխնարաբերությունների համար:

Նժման և վորակով բարձր ապրանքը կուժեղացնի արդյունաբերության կապը գյուղացիական տնտեսության հետ և կարագացնի պետական արդյունաբերության ղեկավարությունը ըն-

թացող գյուղատնտեսության վերակերաման պրոցեսը:

Արագակաճ խոր արդյունաբերության արդակցութունների ամրացման համար ձեռնարկաճ աճ միջ ցների կենսագործման խնդրում ս ծ նշանակություն ունեն արտադրակա խորհրդակցությունները:

Յերկրի անտ սական շինարարություն մեջ, մեր ուժը, մեր հենարանը դա բանվորական մասնաների շինարարությունը ցույց տված ակտիվ մասնակցությունն է: Պետական ձեռնարկություն մեջ աշխատող բանվորը զիտակցում է, վոր արտադրության բարելավումը վողջ բանվոր դասակարգի գործն է, վորը և միաժամանակ կազմում էր իր կենսական շահը:

Անա թե ինչու արհմիություններն, արտադրական խորհրդակցությունների գործնելությունըն ուշագիր դիտելով, նրանց սխալներն համբերությունաճ ուղղելով, հնարավորություն կունենան արտադրական խորհրդակցություն երի միջոցով «գիտակցաբար և վճռականորեն անցել համառ, գործնական, յերկար տարիների համար ծրագրված աշխատանքի՝ բանվորներին և բոլոր աշխատավորներին մասնակից անել ամբողջ յերկրի ժողովրդական տնտեսություն կառավարման պրակտիկ ուսուցման գործին, անշեղորեն բարձ-

րացնելով աշխատանքի դիսցիպլինան և նրա ուսրտադրողականության բարձրացման համար մղվող պայքարի կուլտուրական ձևերը» (11-րդ համագումարի վորոշումներէց)

### ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՅԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԸ

Լենինը շոշափելով մասնագետների խնդիրը, հաճախ է ընդգծել նրանց հանդեպ ընկերական վերաբերմունք ցույց տալու անհրաժեշտութիւնն ու կարևորութիւնը:

Յերբեմն պատահում է, վոր յերիտասարդ բանվորները թշնամաբար են վերաբերվում մասնագետներին: Մինք պետք է բացատրենք այդ վերաբերմունքի փաստակարութիւնը և ճիշտ փոխհարաբերութիւնն ու ընկերական միջավայր ստեղծենք մասնագետների համար: Վնասակար և անթույլատրելի յե այն տեսակետը, վոր իբր թե մենք մեր այդ «թշնամուն» պետք է հանդուրժենք այնքան ժամանակ, վորպեսզի առաջին իսկ հնարավոր դեպքում ազատվենք նրանցից:

«Առանց գիտութիւն գանազան բնագավառների՝ տիխնիկայի փորձի մասնագետների դեկավարութիւն, անցումն դեպի սոցիալիզմ անհրնար է» ասել է Լենինը: Հին հասարակարգը գործարաններէց և մեքենաներէց բացի մեզ

տվել է և աշխատանքի վորոշ փորձ ու գիտելիքներ: ՅեՎ յերեխայութիւնն կը լիներ կարծել, վոր մենք կարող ենք շարունակել մեր շինարարութիւնը, յեթե չտիրապետենք գիտելիքների այն պաշարին, վոր կուտակվել է կապիտալիզմի որոք: Կազմակերպելով մեր խորհրդային արտադրութիւնը, մենք պետք է քննենք և ոգտագործենք յուրաքանչյուր տեխնիքական նվաճում, վոր ձեռք է բերել կապիտալիզմը: Արտադրութիւն մեջ մասնագետը հանդիսանում է տեխնիքական գիտելիքների կրողը: Նրա աշխատանքը հսկայական նշանակութիւն ունի արդյունաբերութիւն համար: Նախահեղափոխական շրջաններում մասնագետն իր գիտելիքները ծառայեցնում էր իշխող դասակարգին: Մեր ասելիքն է— ձրգտել, վորպեսզի մասնագետն իր ուժերը տրամադրի վոչ թե մի խումբ կապիտալիստներին— կալվածատերերին, այլ ամբողջ բանվոր դասակարգին:

Մենք պետք է ձգտենք, վորպեսզի «բուրժուական գիտութիւն, տեխնիկայի պտուղները, բարաքակրթութիւն հազարամյա զարգացման պտուղները բաժին չընկնեն մի բուռն մարդկանց, վորոնք ոգտվել են դրանից նրա համար, վորպեսզի շոկվեն և հարստանան, այլ բաժին ընկ-

նենք բոլոր աշխատավորներին ընդհանրապես» (Լենին)։

Մասնագետի համար պետք է ընկերական միջնորդատ ստեղծել թիթեացնելու համար նրա աշխատանքը։ Դեպի մասնագետները ձիշտ վերաբերմունք ցույց տալով, ուշադիր ու զգայուն լինելով դիպի նրա աշխատանքը, մենք կը հասնենք, և նշանակալից շափով արդեն հասել ենք նրան, վոր մասնագետը վոչ թե ահից զրգված, այլ խղճով սկսել է ծառայել բանվոր դասակարգին։

Ձիշտ չե, վոր մասնագետին չպետք է ավելի վճարել, քան վճարվում է բանվորին։ Աշխատավարձի բնագավառում մեզ մոտ դեռ հավասարութուն չկա։ Այդ հավասարութունը չի կարող գոյութուն ունենալ և բանվորների միջև։ Մասնագետին մենք պետք է շատ վճարենք, վորովհետև նրա աշխատանքի վորակը շատ բարձր է։ Մասնագետին լավ վարձատրելով մենք բարենպաստ պայմաններ ենք ստեղծում նրա արդյունավետ աշխատանքի համար։

Այս զրույցի ընթացքում մենք սահմանեցինք վոր մեր պետական ձեռնարկաութուններում շահագործում չկա, վոր այնտեղ ներկայացված է միայն բանվոր դասակարգը։ Մենք պարզեցինք նույնպես, թե ինչու Լենինը մեր պետական ձեռ-

նարկութունները սոցիալիստական է անվանել։ Մենք յուրացրինք այն, թե ինչքան վտանգավոր, ինչքան վնասակար են կուսակցության ու բանվոր դասակարգի համար այն սխալները, վոր թուլատրել է ուղղորդիցան կուսակցության 14-րդ համագումարում մեր պետական արդյունաբերության ելութունը սահմանելիս։

Մենք քննեցինք, թե ինչ խնդիրներ են կանգնած բանվոր դասակարգի և յուրաքանչյուր առանձին բանվորի առաջ, մեր չերկրի սոցիալիստական շինարարության գլխավոր հենարանի՝ պետական արդյունաբերության բարձրացման և բարելավման գործում։ Բարելավելով արտադրութունը, բարձրացնելով իր աշխատանքի արտադրողականությանը, յուրաքանչյուր կոմյերիտական զառնում սոցիալիզմի շինարարության ակտիվ մասնակիցը։

#### ՀՕՐՑԵՐ

1. Վորն է գլխավոր տարբերութունը կապիտալիստական և խորհրդային ֆարրիկալի միջև։
2. Ո՞ւր է գնում մեր ձեռնարկութունների շահույթը։
3. Ինչ՞ով ենք մեր ձեռնարկութունները սոցիալիստական անվանում։
4. Ի՞նչ պետք է անել պետական արդյունաբերության մեջ աշխատանքի արտադրողականութունը բարձրացնելու համար։

5. Ի՞նչ պետք անեն արտադրական խորհրդակցությունները:

6. Ինչ՞ու պետք է ընկերական վերաբերմունք ցույց տալ մասնագետներին:

#### ԱՇԽԱՏԱՆՔ

1. Իմացիր, թե մինչև հեղափոխությունը թև է պատկանել այն ձեռնարկությունը, վորտեղ դու աշխատում ես:

2. Պարզիր, թե 1925 կամ 1926 թվի ընթացքում վորքանով է աճել աշխատանքի արտադրողականությունը ձեր ձեռնարկության մեջ:

3. Ձեր ձեռնարկության մեջ նկատվե՞լ է բանվորական որվա լրիվ չօգտագործման դեպքեր, յեթե այո, պարզիր պատճառները:

4. Գրիր կամ պատմիր, թե ձեր ձեռնարկության մեջ ինչպես է տարվում խնայողության ուժիմը:

«Ազգային գրադարան»



NL0209433

28525

9155 6 15 409.